ԱՐԱՄ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՇԱՀԳԵԼԴՅԱՆ

Ծնվել է 1897թ., Նախիջևանի գավառի Աստաբադ գյուղում: Սկզբնական կրթությունն ստացել է գյուղի, ապա՝ Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում: Աշխատել է Թիֆլիսի <<Պայքար>> թերթի խմբագրությունում, ապա՝ հյուսիսային Կովկասի տարբեր քաղաքներում:

1917թ. անդամակցել է կոմունիստական կուսակցությանը: 1920թ. տեղափոխվել է Հայաստան, աշխատել նախ՝ Դիլիջանի, ապա՝ Էջմիածնի և Ալեքսանդրապոլի գավառների հեղկոմի նախագահ:

1923թ. եղել է Երևանի քաղաքային և գավառային խորհուրդների նախագահը, հետո ընտրվել է ՀԿ(բ)Կ Երևանի գավկոմի քարտուղար (1924-1927):

Սովորել և ավարտել է ՀամԿ(բ)Կ կենտկոմին առընթեր մարքսիզմի դասընթացները (1927-1929), գործուղվել Իվանովոյի մարզային կուսակցական կազմակերպություն (1929-1930): Ա. Շահգելդյանն աշխատել է ՀամԿ(բ)Կ Արխանգելսկի օկրուգային կոմիտեի քարտուղար (1930-1932), Լենինգրադի (այժմ՝ Սանկտ Պետերբուրգ) մարզխորհրդի գործկոմի քարտուղար (1936), ԽՍՀՄ սովխոզների ժողկոմատի ավագ տեսուչ:

Մասնակցել է Մեծ հայրենականին: Ծանր վիրավորվելուց հետո (1942) զորացրվել է:

Կյանքի վերջին տարիներին զբաղվել է գրահրատարակչական գործով. Աշխատել է Մոսկվայի օտար լեզուների գրականության հրատարակչությունում:

Մահացել է 1948 թվականին: